ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՆԱԽԱԳԻԾ

Կ-1096-11.10.2016-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴԵՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի 28-ի Ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրավցնել լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 46-րդ կետով.

«46) **նախնական պայմանագիր**՝ լիազոր մարմնի եւ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջեւ կնքված գրավոր համաձայնություն, որով սահմանվում են ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության նպատակով ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար ներկայացվող դիմումի, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի եւ երկրաբանական ուսումնասիրության նյութերի փորձաքննության ներկայացման ժամկետները:»:

Հոդված 2. Օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 14.1-ին եւ 14.2-րդ կետերով.

«14.1) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային հանձնաժողովի գործունեության կարգի սահմանումը.

14.2) լիազոր մարմնի եւ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջեւ կնքվող նախնական պայմանագրի օրինակելի ձեւի սահմանումը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 17-րդ հոդվածի՝

1. 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 20-րդ եւ 21-րդ կետերով.

«20) ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման մրցութային փաթեթի կազմումը.

21) մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված իրավաբանական անձի հետ նախնական պայմանագրի կնքումը:»:

Հոդված 4. Օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մասում «սահմանված» բառից հետո լրացնել «ընդհանուր հիմունքներով կամ մրցութային» բառերը:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 20.1-ին եւ 20.2-րդ հոդվածներով.

«*ՀՈԴՎԱԾ 20.1 Ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը մրցութային կարգով*

1. Ընդերքօգտագործման իրավունքը մրցութային կարգով տրամադրվում է բացառապես ռադիոակտիվ հումքի երկրաբանական ուսումնասիրության դեպքում:

2. Մրցույթին մասնակցության հայտերին, մրցույթի մասնակիցների որակավորմանը, ֆինանսական եւ տեխնիկական կարողություններին ներկայացվող չափորոշիչները, ինչպես նաեւ մրցութային փաթեթների պատրաստման կարգը սահմանում է կառավարությունը:

3. Ընդերքօգտագործման իրավունքի ձեռքբերման համար մրցույթի մասնակցության հայտը ներկայացվում է լիազոր մարմնին՝ էլեկտրոնային կամ թղթային տարբերակով:

4. Մինչեւ մրցույթի կազմակերպումը լիազոր մարմնի եւ ընդերքօգտագործման համար անհրաժեշտ հողատարածքների սեփականատիրոջ միջեւ կնքվում է հողօգտագործման նախնական պայմանագիր, որով սահմանվում է ընդերքօգտագործողի կողմից՝ հողամասի օգտագործման վճարի եւ ընդերքօգտագործման հետեւանքով հողամասի սեփականատիրոջը պատճառվելիք վնասի եւ բաց թողնված օգուտի չափի փոխհատուցում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Մրցույթը կազմակերպվում, անցկացվում եւ բողոքարկվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, սույն օրենսգրքի եւ «Հրապարակային սակարկությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների համաձայն:

Հոդված 20.2. Մրցույթի արդյունքների ամփոփումը

1. Մրցույթների կազմակերպման եւ անցկացման նպատակով լիազոր մարմնի կողմից ստեղծվում է մրցութային հանձնաժողով:

2. Մրցույթում հաղթած անձը որոշվում է մրցութային առաջարկությունների քննարկման արդյունքով՝ հետեւյալ չափանիշների հիման վրա.

1) ընդերքօգտագործման ոլորտում հայտատուի նմանատիպ աշխատանքների փորձը, ընդերքօգտագործման առաջարկվող ծրագիրը, նորագույն մեթոդների եւ տեխնոլոգիաների կիրառումը, միջազգային փորձի հաշվառումը, նախատեսվող ներդրումների ծավալը, իրականացվելիք աշխատանքների ժամկետները, ստեղծվելիք՝ աշխատատեղերի քանակը.

2) մրցույթի մասնակիցների կողմից առաջարկվող՝ աշխատանքների կատարման ընթացքում շրջակա միջավայրի պահպանության, բնակչության առողջության անվտանգության եւ տեխնիկական անվտանգության ապահովման ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումները.

3) մրցույթի մասնակիցների որակավորումը, ֆինանսական եւ տեխնիկական կարողությունները.

4) մրցույթին չեն կարող մասնակցել սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետում նշված անձիք:

3. Մրցույթի արդյունքների ամփոփման կարգը սահմանվում է մրցույթի կազմակերպիչի կողմից:

4. Մրցույթի մյուս մասնակիցների պահանջով վերջիններիս 10-օրյա ժամկետում տրամադրվում է արձանագրության կրկնօրինակը:

5. Մրցութային հանձնաժողովի կողմից հաղթող ճանաչված անձի հետ մրցույթի արդյունքների ամփոփումից հետո 15-օրյա ժամկետում լիզոր մարմինը կնքում է նախնական պայմանագիր, որով սահմանվում են շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի եւ երկրաբանական ուսումնասիրության նյութերի փորձաքննության ներկայացման ժամկետները:

6. Մրցույթում հաղթող ճանաչված անձը նախնական պայմանագրով սահմանված ժամկետում դիմում է լիազոր մարմնին ընդերքօգտագործման իրավունք ստանալու համար՝ դիմումին կից ներկայացնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Լիազոր մարմինը ընդերքօգտագործման իրավունքը տրամադրում է սույն օրենսգրքի 40-րդ հոդվածի 1-4-րդ մասերով եւ 41-րդ հոդվածով սահմանված կարգով:

7. Եթե Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը բացասական է, ապա լիազոր մարմինն այդ հիմքով մերժում է մրցույթում հաղթող ճանաչված անձին ընդերքօգտագործման իրավունքի տրամադրումը:»:

Հոդված 6. Օրենսգրքի 40-րդ հոդվածի 7-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր 9-րդ կետով.

«9) ընդերքի այն տեղամասը, որի համար դիմումատուն դիմել է, հանդիսանում է ռադիոակտիվ հումքի երեւակման տեղամաս:»:

Հոդված 7. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Սույն թվականի հոկտեմբերի 17-ին ՀՀ Ազգային ժողովի արտահերթ նիստում առաջին ընթերցմամբ ընդունված «Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը,	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ Ազգային Ժողովի մի շարք պատգամավորներ	1.Նախագծում բացակայում է նախնական պայմանագրի հասկացությունը	1. Ընդունվել է	1. Օրենքի նախագիծը լրացվել է նոր 1-ին հոդվածով, համաձայն որի ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածը լրացվել է նոր 46-րդ կետով և տրվել է լիազոր մարմնի եւ ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման համար հայտարարված մրցույթում հաղթող ճանաչված անձի միջեւ կնքվող «նախնական պայմանագրի» հասկացությունը: Առաջարկության ընդունման հիման վրա նախագծի հոդվածների հաջորդական համարակալումները փոխվել են:
	2.Նախագծով հստակ սահմանված չէ, թե որ դեպքերում է ընդերքօգտագործման իրավունքը տրամադրվում մրցութային կարգով, որ դեպքում՝ ընդհանուր հիմունքներով:	2. Ընդունվել է	2. Նախագծի 5-րդ (նախկին 4-րդ) հոդվածով լրացվող 20.1 հոդվածի 1-ին մասում «տրամադրվում է» բառից հետո լրացվել է «բացառապես» բառը:
	3. Նախագծով լրացվող 20.1 հոդվածով նախատեսվում է «հողամասի սեփականատիրոջը պատճառվելիք վնասի եւ բաց թողնված օգուտի չափի փոխհատուցում», սակայն հստակ սահմանված չէ դրանց հաշվարկման մեխանիզմը	3. Ընդունվել է	3. Նախագծի 5-րդ (նախկին 4-րդ) հոդվածով լրացվող 20.1 հոդվածի 4-րդ մասի վերջում լրացվել են «օրենսդրությամբ սահմանված կարգով» բառերը: